ՏԵՂԵԿԱՆՔ

«Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրության վերաբերյալ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի 2010 թվականի մայիսի 11-ի №075-ՀՆ հրամանի համաձայն, սույն թվականի մայիսի 17-21-ը հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներում իրականացվել է սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության, ինչպես նաև ընկերությունների կողմից հրապարակված և փաստացի ապահովվող ջրամատակարարման գրաֆիկների համապատասխանության ուսումնասիրություն:

Ընկերություններում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է հետևյալը.

Ընկերության ստորաբաժանումների աշխատակիցների կողմից լրացվող գրանցամատյանները համապատասխանում են հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 23-ի №№ 283Ա և 284Ա որոշումներով հաստատված օրինակելի ձևերին:

Ընկերությունների գլխավոր տնօրենների համապատասխան հրամաններով նշանակվել են գրանցամատյանների լրացման պատասխանատուները և հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության կազմման պատասխանատուն: Գրանցամատյանների պատասխանատու-ները կատարված գրառումների հիման վրա ստացված տվյալները ներկայացնում են տեղեկատվության կազմման պատասխանատուին, ով էլ դրանց հիման վրա կազմում է հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունը: Սպառիչ պարզաբանումներ և մեկնաբանություններ են ստացվել 2008 թվականի երրորդ եռամսյակից մինչև 2010 առաջին եռամսյակ ընկած ժամանակահատվածում ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունում առկա պարզաբանումներ պահանջող որոշ տվյալների վերաբերյալ:

2009 և 2010 թվականների առաջին եռամսյակի, ինչպես նաև պատահական ընտրանքով մի քանի այլ եռամսյակների համար հանձնաժողով ներկայացված տեղեկատվության այն տվյալները, որոնք համադրվել են ընկերության գրանցամատյանների գրառումների հետ համապատասխանել են:

Պատահական ընտրանքի միջոցով ընտրված հասցեների, որոնք աշխատանքային խմբի կարծիքով առավելապես խոցելի կարող էին լինել գրաֆիկի ապահովման տեսանկյունից (հիմնականում բարձրահարկ շենքերի վերին հարկերում գտնվող բնակարաններ) սպառողների բնակարաններ կատարված այցերի ընթացքում պարզվեց, որ.

1. «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում (այցեր են կատարվել 27 հասցեներ քաղաք Վանաձորում) ջրամատակարարման փաստացի տևողությունների համապատասխանությունը հրապարակված գրաֆիկներին կազմում է 100%: Հարկ ենք համարում նշել նաև, որ բազմաթիվ էին դեպքերը, երբ փաստացի ջրամատակարարումը բավականին գերազանցում էր հրապարակված գրաֆիկներին:
2. «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում (այցեր են կատարվել 33 հասցեներ քաղաք Գյումրիում) ջրամատակարարման փաստացի տևողությունների համապատասխանությունը հրապարակված գրաֆիկներին կազմում է 3%: Հարկ ենք համարում նշել, որ գրեթե բոլոր ուսումնասիրված հասցեներում սպառողների ջրամատակարարումն ապահովվում էր նրանց իսկ պատկանող պոմպերի միջոցով, ինչն աշխատանքային խմբի կողմից գնահատվել է որպես ջրամատակարարման բացակայություն:

Աշխատանքային խումբն առաջարկում է.

«Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներին.

մեկամսյա ժամկետում կազմակերպել լրացուցիչ հրահանգավորում գրանցամատյանների լրացման պատասխանատու անձանց համար գրանցամատյանների վարման և դրանց լրացման պահանջների վերաբերյալ:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին.

մինչև հոկտեմբեր ամիսը լրամշակել հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկները, այն համապատասխանեցնելով փաստացի ջրամատակարարմանը: